

ՀԵՏԽՈՐՀՐԴԱՅԻՆ ՏՐԱՆՍՖՈՐՄԱՑԻԱ

Անցումային և հետպատերազմյան սահմանադրականությունը Բոսնիա և Հերցեգովինայում՝ միջազգային վերահսկողության ներքո. պետական, թե՛ միջազգային ձախողում*

ՆԵՂԻՍ ԱՂԵՄՈՎԻԶ

Զենիցայի համալսարան, Բոսնիա և Հերցեգովինա

Ստացված է 17.04.2015

Ընդունված է 07.01.2016

Հոդվածում դիտարկվում են այն ներպետական և միջազգային գործոնները, որոնք ազդեցություն են ունեցել Բոսնիա և Հերցեգովինայի պետականության ձևավորման վրա Դեյթոնյան համաձայնագրի վավերացումից հետո: Միջազգային համայնքը ջանում էր ամրապնդել պետության ինստիտուցիոնալ ներուժը, բարելավել նորմատիվ հիմքերը օգտագործելով Բարձրագույն ներկայացուցչի լիազորությունները, Մարդու իրավունքների հարցերով պալատի հնարավորություններն, ապա՝ կարևորելով Սահմանադրական դատարանի գործունեությունը: Վերջինիս վերապահված էր գլխավոր դերակատարություն դուրսբերել պետության, դրա սահմանադրական համակարգի պաշտպանության և աջակցության, ինչպես նաև պետության և հասարակական հարաբերությունների ժողովրդավարացման գործընթացում: Դեյթոնյան համաձայնագրից բխող՝ երեք հիմնադիր համայնքների առանձնահատուկ դերակատարության ամրագրումը սահմանադրությունում նպաստում էր պետության ամրապնդմանը, սակայն վերջին շրջանում լրջորեն խոչընդոտում է հետագա զարգացումն ու ժողովրդավարության լիարժեք կիրառումը: Մասնավորապես, էապես տարբերվում են երեք հիմնադիր ժողովուրդներին պատկանող և այլ քաղաքացիների իրավունքները: Հետևապես, հետպատերազմյան շրջանում կարևոր դերակատարություն ունեցած սահմանադրությունը սպառել է առաջընթաց ապահովելու հնարավորությունները և կարիք ունի լուրջ բարեփոխումների՝ եվրոպական չափանիշներին համապատասխանեցնելու նպատակով:

Բանալի բառեր

Բոսնիայի սահմանադրություն, հիմնադիր համայնքներ, ժողովրդավարացում, Դեյթոնյան համաձայնագիր, միջազգային կառավարում:

* Հոդվածը «Սահմանադրական գործընթացների ազդեցությունը հետխորհրդային տրանսֆորմացիայի վրա» (Երևան, 3-4 նոյեմբերի, 2014թ.) համաժողովում ներկայացված զեկույցի լրամշակված տարբերակն է:

Նախաբան. սոցիալիզմի անցումային փուլից՝ պատերազմական փուլ

Նախկին Հարավսլավիան, չնայած իր առանձնահատուկ և ազատական սոցիալիստական վարչակարգին, կարող է որակվել որպես կոմունիստական վարչակարգ ունեցող բազմազգ պետություն: Կոմունիստական կուսակցությունն իր ողջ սահմանադրական պատմության ընթացքում՝ Երկրորդ համաշխարհային պատերազմից մինչև Հարավսլավիայի կազմալուծում, ջանում էր հավասարակշռություն պահպանել երկու հիմնական սկզբունքների՝ մի կողմից միակուսակցական վարչակարգի և աշխատավոր դասի ինքնակառավարման համակարգի, մյուս կողմից՝ եղբայրության և միասնականության միջև:

Նախկին Հարավսլավիայի Սոցիալիստական Դաշնային Հանրապետության վեց հանրապետություններից մեկի՝ Բոսնիա և Հերցեգովինայի Սոցիալիստական Հանրապետության (հետագայում՝ Բոսնիա) կամ այսպես կոչված «փոքր Հարավսլավիայի» կազմում էին երեք ժողովուրդներ՝ մահմեդականներ, սերբեր և խորվաթներ՝ առանց որևէ մեկի բացարձակ մեծամասնության, և մինչև 1991թ. ամբողջ տարածքում խառը բնակչություն հաստատած տասնհինգ ազգային փոքրամասնություններ: Ե՛վ արևմուտքում, և՛ արևելքում Բոսնիան մեծապես դիտվում էր որպես բազմաէթնիկ հասարակության խաղաղ համակեցության մոդել¹: Ինչպես Հարավսլավիայի բոլոր մյուս նախկին հանրապետությունների դեպքում, Բոսնիան ևս խաղաղ և բավական բարեկեցիկ երկիր էր, զբաղվածության բարձր մակարդակով, ուժեղ արդյունաբերական և արտահանման վրա կենտրոնացված տնտեսությամբ, ինչպես նաև լավ կրթական համակարգով: Յուրաքանչյուր քաղաքացի ուներ սոցիալական և բժշկական ապահովագրություն²:

Իոսիֆ Բրոզ Տիտոյի մահվանից հետո, 1980-ական թվականներին էթնիկ ազգայնականությունը դանդաղ, բայց հաստատուն քայլերով և աճող ագրեսիվությամբ պառակտում առաջացրեց Հարավսլավիայի հիմնադիր հանրապետությունների մի շարք էթնիկ խմբերի միջև: Ուստի, Հարավսլավիայի փլուզումից առաջ ծառայած խնդիրներից մեկն

¹ **Marko J.**, Post-conflict Reconstruction through State- and Nation-building: the Case of Bosnia and Herzegovina, European Diversity and Autonomy Papers, EDAP, 2005, 4, p. 5.

² **Malcolm N.**, Bosnia A Short History. New York University Press, 1994.

Էր Հարավսլավիայի դաշնության հայեցակարգի պահպանումը բազմա-
 էթնիկ պետության շրջանակներում³: Այդ բարեփոխումը պահանջում էր
 մեկ այլ՝ միակուսակցական պետական համակարգի բարեփոխում:
 Նույն ժամանակահատվածում Հարավսլավիայի կառավարությունը
 սկսեց աստիճանաբար հեռանալ կոմունիզմին բնորոշ պլանային
 տնտեսությունից և փորձեց անցում կատարել արևմտյան Եվրոպայի
 երկրներին հատուկ ազատական շուկայական տնտեսությանը:
 Հարավսլավիայի վարչապետ Ա. Մարկովիչը նախաձեռնեց երկրի
 տնտեսության մասնավորեցմանն ուղղված առաջին քայլերը: Այդուհան-
 դերձ, տնտեսական բարեփոխումներում արձանագրված վատ արդյունք-
 ներն, ինչպես նաև Հարավսլավիայի դաշնության ձախողված
 ապակենտրոնացման նկատմամբ հիասթափությունն առաջ բերեցին
 անկախացման նոր պահանջներ:

Նույն խնդիրները կային նաև Բոսնիայում: 1990թ. նոյեմբերին
 երկրում անցկացվեցին առաջին բազմակուսակցական խորհրդարանա-
 կան ընտրությունները, որոնց արդյունքում էթնիկ պատկանելության
 հիման վրա ձևավորված երեք կուսակցությունների դաշինքը փոխա-
 րինեց Կոմունիստական կուսակցությանը: Այդուհանդերձ, երեք էթնիկ
 խմբերը չկարողացան համաձայնության գալ Բոսնիայի ապագայի
 վերաբերյալ ազգային ռազմավարության հարցում. շարունակել մնալ
 Հարավսլավիայի Դաշնության կազմում, թե՞ հետևել Խորվաթիայի ու
 Սլովենիայի օրինակին և հռչակել անկախություն:

1992թ. մարտի 1-ին ՄԱԿ-ը ճանաչեց Բոսնիայի անկախությունը:
 Միայն այն բանից հետո, երբ Սլովենիան և Խորվաթիան փորձեցին
 համապատասխանել Խորհրդային միության տարածքում և Արևելյան
 Եվրոպայում նոր պետությունների ճանաչման վերաբերյալ չափանիշ-
 ներին⁴, Եվրոպական հանձնաժողովը և դրա անդամներն ի վերջո

³ **Banac I.**, *The National Question in Yugoslavia: Origins, History, Politics*, Cornell University Press, 1988.

⁴ **Szasz Paul C.**, *Protecting Human and Minority Rights in Bosnia: A Documentary Survey of International Proposals*, *California Western International Law Journal*, 2, 25, 1995, p. 234-249; **Rich R.**, *Recognition of States: The Collapse of Yugoslavia and the Soviet Union*, *EJIL*, 1, 4, 1993, 40-52; **Hillgruber Ch.**, *The Admission of New States to the International Community*, *EJIL*, 9, 1998, 494-511.

որոշեցին ճանաչել Բոսնիա և Հերցեգովինան⁵: Մինչ այդ անցկացված հանրաքվեի արդյունքներով Բոսնիայի քաղաքացիների մեծամասնությունը քվեարկեց անկախ, ինքնավար և ինքնիշխան պետություն ունենալու օգտին: Բոսնիայի սերբերի մեծամասնությունը, որը հռչակել էր անկախ Սերբական Հանրապետություն (Republika Srpska) և որին մեծապես աջակցում էր Հարավսլավիայի մնացած հատվածը, ինչպես նաև Հարավսլավիայի ժողովրդական բանակը, չընդունեց այդ որոշումը: Մկսվեց դաժան պատերազմ, որը տևեց գրեթե չորս տարի: Դա Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած առավել սուր հակամարտությունն էր. ցեղասպանություն, էթնիկ զտումներ, համակենտրոնացման ճամբարներ, ուրբիցիդ և ահռելի մեծ սոստեսական վնաս:

Բոսնիայի նոր սահմանադրությունը՝ որպես խաղաղության միջազգային համաձայնագրի մաս

1995թ. դեկտեմբերի 14-ին Խորվաթիայի Հանրապետությունը, Բոսնիա և Հերցեգովինայի Հանրապետությունը և Հարավսլավիայի Դաշնային Հանրապետությունը ստորագրեցին Բոսնիա և Հերցեգովինայում խաղաղության մասին ընդհանուր շրջանակային համաձայնագիրը՝ հայտնի որպես Դեյթոնյան խաղաղության համաձայնագիր (հետագայում՝ Դեյթոնյան համաձայնագիր): Ի հավելումն դրան, ստորագրող երկրներն, ինչպես նաև պայմանավորվող կողմերը, ստորագրեցին տասներկու Հատուկ համաձայնագրեր՝ ներկայացված որպես Ընդհանուր շրջանակային համաձայնագրի հավելվածներ: Ստորագրող կողմերի կազմում էին տարբեր անդամներ, որոնք առնչվում էին խաղաղության համաձայնագրի ինչպես քաղաքացիական, այնպես էլ ռազմական բաղադրիչի հետ: Խաղաղության համաձայնագրի ստորագրամար հակառակորդ կողմերը վերջ դրեցին Եվրոպայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած առավել դաժան զինված հակամարտությանը:

Ընդհանուր շրջանակային համաձայնագրի 4-րդ հավելվածի համաձայն, սահմանադրությունն ուժի մեջ պետք է մտնեի Ընդհանուր

⁵ Hillgruber Ch., p. 507 et seq.

շրջանակային համաձայնագրի ստորագրմամբ՝ որպես Բոսնիա և Հերցեգովինայի սահմանադրությանը փոխարինող սահմանադրական ակտ⁶: Սահմանադրության տեքստը գլխավորապես ձևավորվեց Բոսնիայում անցկացված խաղաղության վերաբերյալ բանակցությունների ընթացքում⁷, իսկ տեքստի վերջնական տարբերակը Դեյթոնում կայացած դռնփակ բանակցությունների արդյունք է:

Ըստ Դեյթոնյան համաձայնագրի 4-րդ հավելվածի, Բոսնիայի սահմանադրությունն այդ միջազգային իրավական համաձայնագրի անքակտելի մասն է⁸: Ի տարբերություն այլ հավելվածների՝ Բոսնիայի սահմանադրությունը ներկայացված չէ համաձայնագրի տեքստով: Փոխարենը, Բոսնիայի պաշտոնական ներկայացուցիչները, Դաշնությունը և Սերբական Հանրապետությունը (պետությունը կազմող երկու միավորումները) հավանության արժանացրեցին սահմանադրության տեքստը՝ կից հայտարարությամբ: Ֆորմալ տեսանկյունից կարելի է նույնիսկ պնդել, որ Բոսնիայի Հանրապետությունը՝ որպես միջազգայնորեն ճանաչված պետություն, սահմանադրության տեքստը ձևավորեց իր տարածքի մի մասի վրա փաստացի վերահսկողություն սահմանած այլախոհ խմբերի հետ միասին⁹: Սակայն, առավել իրատեսական է կարծել, որ սահմանադրությունն ուժի մեջ մտնելուց հետո միջազգային համայնքը փոխարինեց Բոսնիայի ժողովրդին կամ այլ կերպ ասած ժողովրդին՝ որպես ինքնիշխան սահմանադրական իշխանության տիրապետողների¹⁰:

Չնայած սահմանադրությունը ժողովրդավարական չէր, այդուհանդերձ այն մի կողմից խաղաղության հաստատման, մյուս կողմից՝ Բոսնիայի՝ որպես անկախ պետության, պահպանման անհրաժեշտության միջև փոխզիջում էր, որը հանգեցրեց դյուրաբեկ պետության և ուժեղ դաշնային միավորումների կամ, այլ կերպ ասած,՝ սուբյեկտների

⁶ Հոդված 12.1 :

⁷ **Szasz P. C.**, The Quest for a Bosnian Constitution: Legal Aspects of Constitutional Proposals Relating to Bosnia, *Fordham International Law Journal*, 2, 19, 1995.

⁸ Բոսնիայի սահմանադրական դատարանի ընդունած թիվ U 5/98-III վճիռ, 19-րդ և 73-րդ պարբերություն:

⁹ **Gaeta P.**, A Breakthrough for Peace and Justice? The Dayton Agreements and International Law, *EJIL*, Issue 7, 1996, 157-172.

¹⁰ **Maziau N.**, L'internationalisation du pouvoir constituant, *Revue Générale de Droit International Public*, 3, 2002, 560-577.

(Մերբակյան Հանրապետություն և Դաշնություն) առաջացմանը: Այդ տեսակետը լավագույնս հաստատում է լիազորությունների բաշխման վերաբերյալ սահմանադրական դրույթը (3-րդ հոդված): Դրա առաջին պարբերությունը սահմանում է իրավասությունների նեղ ցանկ, որը մանրամասն ներկայացնում է պետության պարտավորությունների շրջանակում գտնվող հիմնական և իրավական ոլորտները: Երրորդ պարբերությունը կարգավորում է առանձին միավորումների մնացյալ պարտավորությունները¹¹:

Բոսնիայի սահմանադրության ոչ ժողովրդավարական բնույթը հաստատում է նաև այն, որ սահմանադրությունը երբեք պաշտոնապես անգլերենից չի թարգմանվել երկրի երեք պետական լեզուներից որևէ մեկով և երբևէ չի տպագրվել Բոսնիա և Հերցեգովինայի պաշտոնաթերթում: Եվրոպայի խորհուրդը երկրի պետական լեզուներով թարգմանել է Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիան (ՄԻԵԿ), որը սահմանադրության անքակտելի մասն է, ինչպես նաև Բոսնիայի սահմանադրության առաջին հավելվածում հիշատակված փաստաթղթերը՝ որպես սահմանադրության բաղկացուցիչ մաս: Սակայն, միայն ՄԻԵԿ-ը տպագրվել է Բոսնիա և Հերցեգովինայի պաշտոնաթերթում 1999թ.¹²:

Անցումը հետպատերազմյան պայմաններում

Հետպատերազմյան փուլում Բոսնիա և Հերցեգովինայի առաջնայնություններից մեկն անցումային շրջանի արդարադատությունն էր: Նախկին Հարավսլավիայի հարցերով միջազգային քրեական դատարանի գործունեությունը հակամարտության ավարտին հաջորդած առաջին

¹¹Կարծիք կա, որ «պետության և դրա սուբյեկտների միջև պարտավորությունների բաժանման սկզբունքն» ամուր հիմքեր ունի Բոսնիայում: Սակայն իրավական տեսանկյունից այդ տեսակետը ճշմարիտ չէ, քանզի «պետությունն» ընդգրկում է իշխանության բոլոր վարչական-տարածքային մակարդակներն, այդ թվում՝ տեղական համայնքները: Ակնհայտ է, որ այդ սխալմունքը ծագում է Բոսնիայի սահմանադրական համակարգի վիճելի մեկնաբանության արդյունքում, քանզի այն հստակորեն սահմանված չէ Բոսնիայի սահմանադրության մեջ:

¹² Official Gazette of Bosnia and Herzegovina, no. 6/99.

տարիներին անցյալը հաղթահարելու միակ մեխանիզմն էր¹³: Մի քանի տարի անց պատերազմական հանցագործությունների քրեական հետապնդման առաջատար դերը ստանձնեց Բոսնիա և Հերցեգովինայի դատախազության պատերազմական հանցագործությունների հարցերով հատուկ վարչությունը¹⁴, քանզի առանձին միավորումների ստորին ատյանի դատարանները նման խնդիրները սովոր էին լուծել ոչ վճռական և ոչ լիարժեք կերպով¹⁵: Անձի քրեական պատասխանատվության առնչությամբ միջազգային մարդասիրական իրավունքի դանդաղ կիրառումը նվազեցնում էր ժողովրդի՝ ամուր հենքի վրա ապագա պետության կառուցման հնարավորությունը:

Բոսնիայի՝ որպես ինքնիշխան և անկախ պետության, ճանաչումը (սահմանադրության 1-ին հոդված) բազմաէթնիկ պետության գոյատևման գինն էր՝ անհրաժեշտ էթնիկ գտումներն ապաստինականացնելու համար: Երկրում չորս տարի տևած զինված հակամարտության արդյունքում գրանցվեց Եվրոպայում Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո տեղի ունեցած առավել մեծամասշտաբ արտաքսման դեպքը: Ըստ ՄԱԿ-ի փախստականների հարցերով զերագույն հանձնակատարի և ԵԱՀԿ-ի զեկույցների, Բոսնիայում ավելի քան 2.2 միլիոն մարդ պարտադրված էր լքել իր բնակավայրը, որից 1.3 միլիոնը ապաստան գտավ երկրի սահմաններից դուրս, իսկ մնացածը՝ սահմանների ներսում: Չնայած փախստականների և ներքին տեղահանված անձանց սեփականության իրավունքի վերականգնման գործընթացում արձանագրված հարաբերական հաջողությանը՝ միջազգային համայնքին և պետական իշխանություններին չհաջողվեց վերացնել էթնիկ գտումների հետևանքները¹⁶: Ուստի, պետության ժողովրդագրական (միատարր էթնիկ տարածքի) նոր պատկերը հին և նոր

¹³ ICTY, www.un.org/icty.

¹⁴ **Lauth M.**, Ten years after Dayton: War crimes prosecutions in Bosnia and Herzegovina, Helsinki, *Monitor*, 4, 2005.

¹⁵ **Garms U., Peschke K.**, War Crimes Prosecution in Bosnia and Herzegovina 1992-2002, *Journal of International Criminal Justice*, 4 (2), 2006, 258-282.

¹⁶ Էթնիկ գտումների հետևանքների վերացման հիմնական խնդիրներից մեկը տեղահանված անձանց՝ մինչպատերազմյան շրջանում զբաղեցրած իրենց աշխատանքային դիրքի վերականգնման անհնարիությունն էր: (Բոսնիա և Հերցեգովինայի սահմանադրական դատարանի թիվ U-19/01 վճիռը, 02. 11. 2001):

սահմանադրությունների մարտահրավեր է: Պետությունը պարտավոր է այդ նոր ժողովրդագրական իրավիճակը համապատասխանեցնել Բոսնիայի սահմանադրական դատարանի թիվ U-5/98 (հուլիսի 1, 2000թ.) շրջադարձային վճռին և ՄԻԵԿ-ին:

Նոր սահմանադրությամբ ստեղծվեց նաև նոր սահմանադրական համակարգ: Նախկին կենտրոնացված Բոսնիան դարձավ դաշնային պետություն՝ առանց որևէ սահմանման¹⁷: Ի հավելումն, սահմանադրական համակարգը հիմնված է տարածքի երեք հիմնադիր ժողովուրդների միջև (բոսնիացիներ, խորվաթներ և սերբեր) իշխանության բաժանման սկզբունքի վրա՝ այսպես կոչված «ճալոց» լիակատար բացառմամբ: Մարդու իրավունքների եվրոպական դատարանը դա բնորոշել է որպես խտրական համակարգ¹⁸:

Տարածքային և էթնիկ դաշնային միավորներ համակցող նոր սահմանադրական համակարգը չի զարգացրել երկխոսության մշակույթ հիմնական քաղաքական դերակատարների միջև: Դա ծառայում է որպես երկարատև ճգնաժամի մեջ գտնվող երեք հիմնական էթնիկ խմբերի միջև գոյություն ունեցող թշնամանքի խորացման իրավական հիմք: Բոլոր երեք հիմնադիր ժողովուրդներն իրավասու են կասեցնել ցանկացած իրավական ակտի ընդունման գործընթաց՝ նախաձեռնելով այսպես կոչված ազգային կենսական շահերի պաշտպանության ընթացակարգ¹⁹: Ուստի, միավորման և ինտեգրման մերժումից տասնամյակներ անց, որոնց ընթացքում Հարավսլավիայի սոցիալիզմի ինտենսիվ աջակցում էր և՛ արևելքին, և՛ արևմուտքին, իսկ միջին վիճակագրական քաղաքացին ուներ որոշակի կենսամակարդակ և օգտվում էր Արևելյան դաշինքի երկրներում գրեթե իսպառ բացակայող մի շարք արտոնություններից, շատերն անկարող են հասկանալ դեպի ժողովրդավարություն և շուկայական տնտեսություն տանող վերափոխումների իրական իմաստը: Ավտորիտարիզմի «ճառագնորդները» և

¹⁷ Սահմանադրությամբ սահմանված չէ պետական սահմանադրական կարգը:

¹⁸ ՄԻԵԿ-ի վճիռը «Սեյդիչն ու Ֆինցին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի» գործի առնչությամբ (03. 06. 2009, դիմում թիվ 27996/06 և 34836/06):

¹⁹ Բոսնիայի սահմանադրության 4-րդ և 5-րդ հոդվածներ:

Կոմունիստական կուսակցության նոմենկլատուրայի համակարգն²⁰ իրենց դիրքերն ամրապնդեցին բազմամյա հակամարտության ընթացքում՝ վերածվելով գործիքի ազգայնական կուսակցությունների ձեռքում՝ իրենց նպատակներին հասնելու համար: Արդյունքում, հանրային շահին մշտապես հաջորդող անհատի շահն իր տեղը զիջեց էթնիկ խմբակային շահերին՝ ստանալով երրորդական նշանակություն²¹:

Բոսնիայում օրենքի գերակայության բացը և սահմանադրական ու իրավական այլ շեղումները լավ հիմք են ստեղծում կոռուպցիայի և շուկայական տնտեսության զարգացմանը խոչընդոտող հանցագործության այլ ձևերի զարգացման համար²²:

Բոսնիայի սահմանադրական համակարգը՝ միջազգային վերահսկողության ներքո

Երկրի ճակատագիրը պատասխանատվությամբ տնօրինելու պետական ինստիտուտների անկարողությունը պարտավորեցնում էր միջազգային համայնքին աջակցել դրանց՝ ձեռնարկելով կենտրոնացված և լայնամասշտաբ փոխարինող միջոցներ²³: Միջազգային համայնքի լայնամասշտաբ ներգրավման անհրաժեշտությունն առաջացել էր նաև անցումային երկրներում հաճախ հանդիպող այսպես կոչված «մանկական հիվանդությունների» պատճառով, որոնք առավել սրվում

²⁰ European Stability Initiative, Reshaping international priorities in Bosnia and Herzegovina. Part One: Bosnian Power Structures, European Stability Initiative (pub.), 14.10.1999, p. 4 *et seq.*

²¹ **Bagshaw S.**, Benchmarks or Deutschmarks? Determining the Criteria for the Repatriation of Refugees to Bosnia and Herzegovina, San Domenico, 1997.

²² United Nation Office on Drugs and Crime, Business, Corruption and Crime in Bosnia and Herzegovina: The impact of bribery and other crime on private enterprise, Vienna, 2013.

²³ «Միջազգային համայնքը» կազմված է տարբեր միջազգային կազմակերպություններից և *ad hoc* հաստատություններից, որոնք ունեն պետության խաղաղության պահպանմանն ու քաղաքացիական զարգացմանն ուղղված տարբեր պարտավորություններ՝ հաստատված Դեյթոնյան համաձայնագրով:

են զինված հակամարտությամբ պայմանավորված ահռելի տնտեսական վնասի և սոցիալական անկման հետևանքով²⁴:

Միջազգային համայնքն՝ ի դեմս խառը մարմիններում ներկայացված ինստիտուցիոնալ դերակատարների (օրինակ, սահմանադրական դատարան և Մարդու իրավունքների հարցերով պալատ), բազմաթիվ ոչ կառավարական կազմակերպությունների օժանդակությամբ մեծ ներդրում է ունեցել քաղաքացիական բաղադրիչի իրականացման գործընթացում, ինչը չի կարող բացառապես չափվել ֆինանսական առումով:

Օրինակ, ԵԱՀԿ-ը պատասխանատու էր առաջին ժողովրդավարական ընտրությունների անցկացման, ՄԱԿ-ի ՓԳՀ-ը՝ մարդասիրական օգնության և փախստականներին ու ներքին տեղահանված անձանց աջակցության, Բարձրագույն ներկայացուցչի գրասենյակը, ԵԱՀԿ-ը, ՄԱԿ-ի ՓԳՀ-ը և Սեփականության նկատմամբ պահանջների վերաբերյալ հանձնաժողովը՝ Սեփականության իրավունքի կիրառման ծրագրի համար: Գործընթացում ներգրավված էին նաև Դեյթոնյան համաձայնագրի 8-րդ հավելվածի հիման վրա ձևավորված Ազգային հուշարձանների պահպանման հանձնաժողովը, Բարձրագույն ներկայացուցչի գրասենյակը, որը պատասխանատու էր խաղաղության համաձայնագրի քաղաքացիական բաղադրիչի համար (10-րդ հավելված), և այլն:

Որոշ պետական ինստիտուտներ միջազգային համայնքի ուժեղ ազդեցության ներքո էին կա՛մ ֆինանսավորման համակարգի, կա՛մ իրենց կազմի, կա՛մ այլ տարրերի միջոցով:

Երկու բարձրագույն դատական ինստիտուտները (Մարդու իրավունքների հարցերով պալատն՝ ըստ Դեյթոնյան համաձայնագրի 6-րդ հավելվածի, և Բոսնիայի սահմանադրական դատարանը) ունեն (և/կամ ունեցել են) խառը կազմ: Նույնը վերաբերում է, օրինակ, Կենտրոնական բանկի առաջին կառավարման խորհրդին (Սահմանադրության 7-րդ հոդված)²⁵:

²⁴ Steiner C., Ademovic N. at all, Commentary on the Constitution of Bosnia and Herzegovina, Konrad Adenauer Foundation, Sarajevo, 2010, p. 19.

²⁵ Կենտրոնական բանկի առաջին կառավարման խորհրդի կազմում էին Նախագահը, որին ընտրում էր Արժույթի միջազգային հիմնադրամը Նախագահության հետ խորհրդակցելուց հետո և Նախագահության կողմից նշանակված երեք անդամները (երկուսը՝ Դաշնության ներկայացուցիչներ

Բոլոր վերոնշյալ կազմակերպությունները և ինստիտուտներն այս կամ այն կերպ կապված էին Բոսնիայի սահմանադրության հետ. կամ ուղղակի սահմանադրական նորմի միջոցով²⁶, կամ պաշտոնական սահմանադրության պարբերական հղմամբ՝ ներառելով նաև Դեյթոնյան համաձայնագրի այլ հավելվածներ²⁷: Ուստի, Դեյթոնյան համաձայնագրով ստեղծվել էր (միջ)ազգային սահմանադրական համակարգ՝ պետական և միջազգային իշխանությունների այսպես կոչված «երկակի գործառնությամբ»: Վերջինս սահմանելու համար անհրաժեշտ էր դատարանի համապատասխան որոշում: Թիվ U-9/00 գործի առնչությամբ Բոսնիայի սահմանադրական դատարանն, անդրադառնալով այն հարցին, թե արդյոք Բարձրագույն ներկայացուցիչն իրավասու է օրենքներ ընդունել՝ փոխարինելով խորհրդարանին, հայտարարեց.

«5. Բարձրագույն ներկայացուցիչն ընդունել է Սահմանապահ ծառայության մասին պետական օրենքը 2000թ. հունվարի 13-ին, այն բանից հետո, երբ Խորհրդարանական վեհաժողովը ձախողեց օրենքի այն նախագծի ընդունումը, որն առաջ էր քաշել Բոսնիա և Հերցեգովինայի նախագահությունը 1999թ. նոյեմբերի 24-ին: Հաշվի առնելով Բոսնիայում տիրող իրավիճակը՝ Բարձրագույն ներկայացուցիչ՝ որպես միջազգային համայնքի անդամի, իրավական դերակատարությունն աննախադեպ չէ. նման գործառնություններ իրականացվել են նաև այլ երկրներում՝ հատուկ քաղաքական հանգամանքներում: Այդպիսի օրինակներ են Ազգերի լիգայի կառավարման ներքո գտնված մանդատային տարածքները և, ինչ-որ առումով, Գերմանիան և Ավստրիան Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո: Չնայած

բոսնիացի և խորվաթ, որոնք կիսում էին մեկ ձայն, մյուսը՝ Սերբական Հանրապետության ներկայացուցիչ): Պաշտոնավարման ժամկետն էր վեց տարի:

²⁶ Օրինակ, սահմանադրության հոդված 2.4 անդրադառնում է Դեյթոնյան համաձայնագրի 7-րդ հավելվածին և Սեփականության նկատմամբ պահանջների վերաբերյալ Հանձնաժողովին; հոդված 2.1 անդրադառնում է Դեյթոնյան համաձայնագրի 6-րդ հավելվածին; 6-րդ հոդվածը կարգավորում է Բոսնիայի սահմանադրական դատարանի խառը (միջազգային և ներպետական) կազմի գործունեությունը:

²⁷ **Marko J.**, Friedenssicherung im 21. Jahrhundert: Bosnien und Herzegowina als europäische Herausforderung, **Ginther Konrad** et al. (pub.), Völkerrecht und Europarecht. 25 sterreichischer Völkerrechtstag, Vienna, 2001.

ինքնիշխան կարգավիճակին՝ այդ պետություններում սահմանվել էր միջազգային վերահսկողություն, և միջազգային իշխանությունները, գործելով միջազգային հանրության անունից, փոխարինում էին պետական իշխանություններին: Միջազգային իշխանությունների այդ գործողությունները հաճախ ներկայացվում են վերահսկողության տակ գտնվող պետությունների անունից:

Այդ իրավիճակը հանգեցնում է գործառույթային երկակիության, երբ մեկ իրավական համակարգում գործող իշխանությունը «ներխուժում է» մեկ այլ իրավական համակարգ՝ այդպիսով իր գործառույթները դարձնելով երկակի: Այդպիսին էր Բարձրագույն ներկայացուցչի կարգավիճակը, ով ուներ միջազգային համայնքի կողմից տրամադրված հատուկ լիազորություններ, ինչպես նաև միջազգային մանդատ: Բարձրագույն ներկայացուցիչն, ում լիազորությունները և դրանց իրականացումն, ըստ Ընդհանուր շրջանակային համաձայնագրի 10-րդ հավելվածի, Անվտանգության խորհրդի համապատասխան բանաձևերի և Բոննի հռչակագրի, ենթակա չէին սահմանադրական դատարանի վերանայմանը, մուտք էր գործել Բոսնիայի իրավական համակարգ՝ փոխարինելով պետական իշխանություններին: Բարձրագույն ներկայացուցիչը գործում էր պետական իշխանության անունից, նրա ընդունած օրենքները պետք է դիտարկվեին որպես Բոսնիայի ներպետական օրենք»²⁸: Սակայն այդ օրենքների կիրառման գործընթացը ոչ մի կերպ չէր դյուրացվում միջազգային կազմակերպությունների կողմից, քանզի վերջիններիս գործունեության ոլորտները հաճախ մեծ չափով համընկնում էին և բացարձակ համակարգված ու ներդաշնակ չէին: Ի հավելումն, նրանց երկուստեք պայքարը՝ երկրում իրենց գոյությունն արդարացնելու համար, ոչ մի կերպ չէր պարզեցնում կիրառման գործընթացը²⁹: Վոլֆգանգ Պետրիչի՝ Բարձրագույն ներկայացուցչի պաշտոնը զբաղեցնելուց ի վեր, միջազգային համայնքը փորձում էր վերացնել որոշումների կայացման վրա արտաքին գործոնի ազդեցությունը, որի հետևանքների մասին նախազգուշացումներ

²⁸ The Decision of Constitutional Court of Bosnia and Herzegovina no. U-9/00.

²⁹ O'Flaherty M., Givold G., Post-war Protection of Human Rights in Bosnia and Herzegovina, The Hague, London, Boston, 1998.

նախկինում ևս եղել են:³⁰ Չնայած վերոնշյալ բոլոր նկատառումներին՝ առաջին փուլում միջազգային համայնքն արեց առավելագույնը պետության համար. ամրապնդեց պետության ինստիտուցիոնալ ներուժը, բարելավեց նորմատիվ շրջանակները, պայքարեց ժողովրդի կողմից մերժված իշխանությունների դեմ և այլն: Կառավարման գործընթացը ներպետական իշխանություններին հանձնելուց հետո ևս Բոսնիան որևէ առաջընթաց չգրանցեց: Դրա լավագույն օրինակն է «Սեյդիչն ու Ֆինցին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի» գործի առնչությամբ ՄԻԵԴ-ի կայացրած վճռի իրագործումը:

Մարդու իրավունքների հարցերով պալատի և սահմանադրական դատարանի ազդեցությունը

Մարդու իրավունքների հարցերով պալատը Դեյթոնյան համաձայնագրի 7-րդ հավելվածի հիման վրա ստեղծված հատուկ դատարան էր՝ ուղղված մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանությանը: Այն ձևավորվել էր որպես Մարդու իրավունքների հարցերով հանձնաժողովի մի մաս: Պալատի իրավասությունները նման էին ՄԻԵԴ-ի իրավասություններին: Արդյունքում դրանք հաճախ բխվում էին Բոսնիայի սահմանադրական դատարանի իրավասություններին մարդու սահմանադրական իրավունքների և ազատությունների պաշտպանության ոլորտում՝ սահմանված Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով (ՄԻԵԿ): Ի տարբերություն Բոսնիայի սահմանադրական դատարանի՝ Մարդու իրավունքների հարցերով պալատը, որն այդ անվամբ գործում էր որպես անկախ ինստիտուտ և որի գործունեությունն ավարտվեց 2003թ. դեկտեմբերի 31-ին, կազմված էր գերազանցապես միջազգային դատավորներից՝ ութ միջազգային և վեց ազգային դատավոր: Մարդու իրավունքների հարցերով պալատը լուծում է տվել ավելի քան 15.000 անհատական գործի՝ մեծապես նպաստելով Բոսնիայում պարբերական դարձած խնդիրների

³⁰ **McEvoy J.**, *From Dayton to Brussels?, Power-Sharing Executives Governing in Bosnia, Macedonia, and Northern Ireland*. The National and Ethnic Conflict in the 21st Century series, Chapter 6, University of Pennsylvania Press, 2014

լուծմանը³¹: Մարդու իրավունքների հարցերով պալատը կոչվում էր նաև «փոքր Եվրոպական դատարան»: Այն ուներ հսկայական ազդեցություն մարդու իրավունքների հաջող ինստիտուցիոնալ պաշտպանության գործում՝ հետպատերազմյան և անցումային շրջանում: Մարդու իրավունքների հարցերով պալատն «անցումային շրջանի արդարադատություն» իրականացնող լավագույն օրինակներից է: Դրա ժառանգությունը միայն դրական նախադեպային իրավունքը չէ: Գործունեության իրավական, տեխնիկական և կազմակերպական ռեժիմները ևս փոխանցվեցին սահմանադրական դատարանին: Լավ վերապատրաստված անձնակազմը նույնպես անցավ սահմանադրական դատարանին: Մարդու իրավունքների հարցերով պալատը դադարեց գոյություն ունենալ 2003թ.: Միաժամանակ սահմանադրական դատարանին անցան պալատի բոլոր լիազորությունները:

Բոսնիայի սահմանադրական դատարանը (սահմանադրության 6-րդ հոդված) ստեղծվեց որպես խառը կազմ (վեց ազգային և երեք միջազգային դատավորներ), ուժեղ անկախություն և բավական հավակնոտ մանդատ ունեցող դատարան: Իր յոթ իրավասությունների շրջանակում դատարանն ունի դյուրաբեկ պետության և դրա սահմանադրական համակարգի պաշտպանության և աջակցության դերակատարություն: Այն պատասխանատու է միասնական շուկայական համակարգի ստեղծման, ինչպես նաև բազմակարծիք հասարակության կենսամակարդակի բարելավման համար: Բոսնիայի սահմանադրությունը ներառում է միջազգայնորեն սահմանված մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների վերաբերյալ հսկայական ցանկ, որոնց պաշտպանությանը պետք է հետամուտ լինի դատարանը՝ գործերի վերանայման իրավասության միջոցով: Սահմանադրական դատարանը երկրի առավել կարևոր պետական ինստիտուտն է: Իր դատական պրակտիկայի հիման վրա դատարանը հիմնական ազդեցություն ուներ պետության և հասարակության ժողովրդավարացման գործընթացի, օրենքի գերակայության չափանիշ-

³¹ Զինվորական բնակատեղիների, արտարժույթի խնայողությունների, փախստականների և ներքին տեղահանված անձանց սեփականության իրավունքի վերականգնման և այլնի հետ կապված խնդիրներ:

ների խթանման, մարդու իրավունքների պաշտպանության ու խթանման, ինչպես նաև առանձին միավորումների միջև առկա տնտեսական խոչընդոտների վերացման համար: Այդ առումով հարկ է մեջբերել դատարանի հետևյալ հաստատագրումները.

- Դատարանը վճռեց, որ Բարձրագույն ներկայացուցչի ընդունած բոլոր որոշումները, որոնք նպաստել են պետության ներուժի մեծացմանը, համապատասխանում են երկրի սահմանադրությանը (օրինակ, դատական գործ թիվ U-9/00):

- Դատարանը հայտարարեց, որ բոլոր երեք հիմնադիր ժողովուրդներն ունեն միանգամայն հավասար կարգավիճակ պետության ողջ տարածքում: Այնուհետև դատարանը վճռեց, որ պետական իշխանության էթնիկ-ազգային հայեցակարգը հակասահմանադրական է և պետք է մշակվի տարածքային և էթնիկ դաշնություն (գործ թիվ U-5/98):

- Դատարանը հայտարարեց, որ Բոսնիա և Հերցեգովինայի Նախկին Հանրապետությանը պատկանող հանրային սեփականությունը պատկանում է նոր դաշնային պետությանը, այլ ոչ թե դրա առանձին միավորումներին (գործ թիվ U-1/11):

- Դատարանը վճռեց, որ հիմնադիր ժողովրդի կենսական շահը չի կարող գերակայություն ունենալ գործունակ պետության սկզբունքի նկատմամբ (գործ թիվ U-10/05):

- Հազարավոր գործերի քննության ժամանակ դատարանը պաշտպանել է քաղաքացիների իրավունքներն ու ազատությունները՝ կիրառելով ՄԻԵԿ-ը, ուստի, կարելի է փաստել, որ հաջողությամբ փոխարինել է Մարդու իրավունքների հարցերով պալատին:

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի ազդեցությունը Բոսնիայի սահմանադրության վրա

Ներկայումս Դեյթոնյան համաձայնագիրը՝ որպես «խաղաղության ապահովման» գլխավոր մեխանիզմ, սպառել է իրեն: Խաղաղության ապահովման գործիքներից մեկն էթնիկ խմբերի միջև հավասարակշռության ապահովումն էր իշխանության բաժանման սկզբունքի և վետոյի կիրառման մեխանիզմի հիման վրա: Ժողովրդավարության բացը Բոսնիայի սահմանադրության մեջ օրինականացվում է հենց այդ դերակատարությամբ: Այնուամենայնիվ, այդ գործիքն ակնհայտորեն

դարձել է խոչընդոտ պետության՝ Դեյթոնից Բրյուսել անցում կատարելու համար: Ո՞րն է դրա պատճառը:

Բոսնիայի էթնիկ-ազգային քաղաքական գործիչները ի վիճակի չեն փոխհամաձայնության գալ պետության ապագայի, դրա ապագա ժողովրդավարացման, գործունակ համակարգի ստեղծման, ինչպես նաև կոլեկտիվի և անհատի իրավունքների արդյունավետ պաշտպանության հարցերում: Սահմանադրական վետոյի մեխանիզմը խոչընդոտում է բարդ և պարբերական խնդիրների լուծմանը: Սահմանադրությունը ոչ միայն դարձել է խոչընդոտ գործունակ պետության ստեղծման համար, այլև ձեռք է բերել խտրական բնույթ: ՄԻԵԴ-ի Մեծ պալատն իր 2009թ. վճռում³² «Մեյդիչն ու Ֆինցին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի» գործի առնչությամբ սահմանեց, որ Բոսնիայի սահմանադրությունը չի համապատասխանում ՄԻԵԿ-ին: Ազգային իրավական և սահմանադրական համակարգը խտրականության է դնում բոլոր այն քաղաքացիների նկատմամբ, ովքեր երեք հիմնադիր ժողովուրդների անդամ չեն: 2009թ. առ այսօր Բոսնիան չի կարողացել այդ վճիռն ի կատար ածել:

Բոսնիա և Հերցեգովինայի երկու քաղաքացիներ՝ էթնիկ ծագմամբ հրեա և գնչու, համապատասխանաբար՝ Դ. Մեյդիչը և Ջ. Ֆինցին, 2006թ. հայց ներկայացրեցին Մարդու իրավունքների եվրոպական դատարան: Հայցվորները պահանջում էին, որ դատարանը վճիռ կայացնի ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի՝ ընտրվելու իրավունքից իրենց զրկելու համար: Եվրոպայի խորհրդի Վենետիկի հանձնաժողովն իր խորհրդատվական կարծիքում պաշտպանում էր հայց ներկայացնողների դիրքորոշումը՝ նշելով, որ «Այլոց» սահմանադրական և իրավական կատեգորիային պատկանող անդամներին ընտրվելու իրենց իրավունքից զրկելը անպայմանորեն չի առաջնորդվում հիմնադիր ժողովուրդների կոլեկտիվ հավասարության սկզբունքով, և, հետևաբար, համամասնության սկզբունքին համապատասխանելու պարտավորության խախտում է: Վերջինս մշակել է ՄԻԵԴ-ը՝ որպես միջոց՝ պարզելու՝ արդյոք ՄԻԵԿ-ի կողմից երաշխավորվող իրավունքներին և ազատություններին միջամտությունն արդարացված է, թե ոչ: Եվրոպայի

³² ECtHR, Sejdíć and Finci v. Bosnia and Herzegovina, Applications no. 27996/06 and no. 34836/06.

խորհրդի Վենետիկի հանձնաժողովը առաջ է քաշել այն փաստարկը, որ Բոսնիայի սահմանադրությունը կարող է որպես օրինակ ծառայել՝ հաստատելու, որ գործնականում կա ընտրվելու իրավունքի սահմանափակման օրինակ, ինչը հակասում է ՄԻԵԿ-ի թիվ 12 լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածին: Դա կարելի է հաղթահարել հիմնադիր ժողովուրդներից բացի ներառելով նաև «Այլոց» սահմանադրական կատեգորիան Բոսնիա և Հերցեգովինայի նախագահության համամասնական կազմի վերաբերյալ դրույթներում: Գործը հանձնվեց ՄԻԵԿ-ի Մեծ պալատի քննությանը, որը 2009թ. հունիսի 3-ին անցկացրեց դատական լսումներ դրա թույլատրելիության և հիմնավորվածության վերաբերյալ և 2009թ. նոյեմբերի 22-ին կայացրեց վերջնական վճիռ: Դատարանն արձանագրեց, որ Բոսնիայի սահմանադրության դրույթները՝ կապված Խորհրդարանական Վեհաժողովի ժողովուրդների պալատի հետ, խտրական են այսպես կոչված «Այլոց» նկատմամբ՝ ըստ ՄԻԵԿ-ի թիվ 1 լրացուցիչ արձանագրության 3-րդ և 14-րդ հոդվածների (պարբերություն 50): ՄԻԵԿ-ի Մեծ պալատը եզրակացրեց, որ հաշվի առնելով այն առաջընթացը, որը երկիրն արձանագրել է Դեյթոնյան համաձայնագրի կնքումից հետո (պարբերություն 47), այն այլևս իրավասու չէ «Այլոց» ամբողջությամբ զրկել օրենսդրական պալատում ընտրվելու իրենց իրավունքից: Դրա համար ոչ մի խելամիտ և հիմնավորված պատճառ չկա: ՄԻԵԿ-ը նաև եզրակացրել է, որ ՄԻԵԿ-ը չի պահանջում իշխանության հավասար բաժանման սկզբունքի լիովին չեղարկում և այնպիսի սկզբունքի ներմուծում, որը կարտացոլի «մեծամասնության» կամքը: Ավելին, Բոսնիայում դեռ չի հասունացել այդ իրավիճակի անհրաժեշտությունը: Այդուհանդերձ, ՄԻԵԿ-ը անդրադարձել է Վենետիկի հանձնաժողովի կարծիքին, որում առաջարկվում էր իշխանության հավասար բաժանման սկզբունքի պահպանում՝ միննույն ժամանակ դրանից դուրս չթողնելով որոշ խմբերի (պարբերություն 48): ՄԻԵԿ-ը միննույն փաստարկն է առաջ քաշում, երբ անդրադառնում է Բոսնիա և Հերցեգովինայի նախագահությունում «Այլոց» ընտրվելու իրենց իրավունքից զրկելու խնդրին՝ հղում կատարելով ՄԻԵԿ-ի թիվ 12 լրացուցիչ արձանագրության 1-ին հոդվածին (պարբերություն 56, 47-49

հողվածներ)³³: Հետևաբար, ՄԻԵԴ-ը անդրադարձել է պետության՝ ժողովրդավարացման ուղղությամբ հետագա քայլեր կատարելու պարտավորությանը, ինչը ներառում է նաև պետության բարձրագույն նորմատիվ ակտը՝ սահմանադրությունը: ՄԻԵԴ-ի՝ «Սեյդիչն ու Ֆինցին ընդդեմ Բոսնիա և Հերցեգովինայի» գործի առնչությամբ վճիռն ուներ հստակ ուղերձ. այն ինչ ընդունելի էր մի քանի տարի առաջ, այլևս ընդունելի չէ: Եթե Բոսնիա և Հերցեգովինան ցանկանում է դառնալ ԵՄ-ի իրական գործընկեր, պետությունը և քաղաքական գործիչները պետք է ավելի մեծ ուշադրություն դարձնեն ժողովրդավարությանը, մարդու իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պետության մեջ քաղաքացիների դերակատարությանը: Անհրաժեշտ է ամրապնդել անկախ լրատվամիջոցների ինստիտուտը և քաղաքացիական հատվածը, ինչպես նաև զարգացնել կոռուպցիայի և հանցագործությունների դեմ պայքարի ներուժ ունեցող ենթակառուցվածք՝ պետք է որդեգրել եվրոպական չափանիշները:

Եզրակացություն

Բոսնիա և Հերցեգովինայի միասնական պետականության պահպանման նպատակով Դեյթոնյան համաձայնագրում պետության երեք հիմնադիր համայնքների համար սահմանվեց առանձնահատուկ կարգավիճակ: Դրա հետևանքով ձևավորվեցին յուրահատուկ քաղաքական ինստիտուտներ և իրավական նորմեր, որոնց գործունեության արդյունքների ու հեռանկարների վերլուծությունը ցույց է տալիս, որ

1. երկրի սահմանադրության մշակումն ու ընդունումը տեղի է ունեցել առանձնահատուկ մեխանիզմներով՝ պայմանավորված բարդ իրավիճակով ու տարածքային ամբողջականության պահպանման ձգտումով: Այն դարձել է Դեյթոնյան համաձայնագրի անքակտելի մասը և միջազգային հանրությանն օժտել մի շարք հարցերում Բոսնիայի ժողովրդի հետ/փոխարեն որոշումներ ընդունելու իրավասությամբ:

2. Սահմանադրությունը՝ գերագույն նպատակադրումից բխող մեխանիզմների կիրառման արդյունքում չունեցավ ժողովրդավարա-

³³ Steiner C., Ademovic N. at al, op. cit.

կան բնույթ և հանգեցրեց դյուրաբեկ պետության և ուժեղ դաշնային միավորների ձևավորմանը: Պետական կառավարման համակարգի ձևավորման վրա էական ազդեցություն ունեցավ նաև այն հանգամանքը, որ երկրում չորս տարի տևած պատերազմական գործողությունների արդյունքում գրանցվել էր Եվրոպայում երկրորդ աշխարհամարտից հետո արձանագրված առավել մեծամասշտաբ հումանիտար աղետը, որն ուղեկցվում էր էթնիկ գտումներով ու փախստականների աննախադեպ հոսքով: Գլխավոր խնդիրը դարձավ երեք հիմնադիր ժողովուրդների համակեցության ապահովումը:

3. Երեք հիմնադիր ժողովուրդների միջև իշխանության բաժանման, ինչպես նաև համակեցության ապահովման նպատակով նրանցից յուրաքանչյուրին իրավական ակտերի ընդունման ժամանակ վետոյի իրավունքի տրամադրման սահմանադրական նորմերը ոչ միայն հանգեցրեցին մյուս էթնիկ խմբերի իրավունքների ոտնահարմանն, այլև խոչընդոտում են զարգացմանն ու հիմնական քաղաքական դերակատարների միջև հարցերի լուծման ժամանակ անհրաժեշտ երկխոսության մշակույթի ձևավորմանը:

4. Սահմանադրության մեկ այլ առանձնահատկությունն էլ այն էր, որ թույլ էր տալիս միջազգային հանրությանն ներգրավվել երկրի կառավարման գործընթացներում ավելի մեծ լիազորություններով, քան ներպետական ինստիտուտները: Բարձրագույն ներկայացուցիչը կարող էր միանձնյա ընդունել օրենքներ, որոնք անմիջական կիրառման կարգավիճակ ունեին, Մարդու իրավունքների հարցերով պալատի 14 անդամներից միայն 6 էին ազգային դատավորներ, Սահմանադրական դատարանի անդամների՝ երկու երրորդը:

5. Սահմանադրական դատարանի այլ առանձնահատկությունն էր այդ ատյանում քննարկվող հարցերի լայն շրջանակը: Մասնավորապես, Մարդու իրավունքների հարցերով պալատին փոխարինելով, դատարանը զբաղվում է ոչ միայն Մարդու իրավունքների եվրոպական կոնվենցիայով սահմանված իրավունքների ու ազատությունների պաշտպանությամբ (կոնվենցիան ճանաչվել է սահմանադրության անբաժանելի մաս), այլև պետական կառավարման մարմինների լիազորությունների (Բարձրագույն ներկայացուցչի որոշումների օրինականություն, պետություն-հիմնադիր ժողովուրդ

հարաբերությունների ճշգրտում և այլն) և հիմնադիր ժողովուրդների իրավունքների ճշգրտումով (հավասար կարգավիճակ և այլն):

6. Թեև սահմանադրության վերոհիշյալ առանձնահատկությունները հնարավորություն տվեցին հաղթահարել հետպատերազմյան ծանր իրավիճակը, սակայն այն դարձել է խոչընդոտ պետության լիարժեք գործունեության և զարգացման համար, ինչպես նաև արմատավորել է խտրական վերաբերմունք այն քաղաքացիների նկատմամբ, որոնք չեն պատկանում հիմնադիր ժողովուրդներին: Մարդու իրավունքների եվրոպական դատարանն արձանագրել է, որ այն, ինչն ընդունելի էր մի քանի տարի առաջ, այլևս ընդունելի չէ: Բոսնիա և Հերցեգովինայի սահմանադրությունը պետք է համապատասխանեցվի եվրոպական չափանիշներին, եթե երկիրը ձգտում է դառնալ զարգացող, լիարժեք ժողովրդավարական պետություն: Այդ նպատակին հասնելու համար պետք է ոչ միայն բարեփոխել սահմանադրությունն, այլև ապահովել երկրի կենսագործունեության սահմանադրականությունը:

Transitional and Post-war Constitutionalism in Bosnia and Herzegovina Under International Control: National or International Failure?

NEDIM ADEMOVIC

University of Zenica, Bosnia and Herzegovina

The article discusses the national and international factors that affected the statehood formation of Bosnia and Herzegovina based on the Dayton Peace Agreement. The international community sought to strengthen the state's institutional capacity, improve the normative frames using the powers vested in the High Representative as well as the authority of the Human Rights Chamber with a major emphasis on State Constitutional Court. The Court was assigned a major role in the protection and support of the weak state, its constitutional system as well as in the process of democratization of state and society. The specific role attributed to three constituent communities in the Constitution – stemmed from the Dayton Agreement – has contributed to state strengthening. However, recently it hinders the processes of state development and full functioning of democracy. Particularly, the rights of the three constituent peoples significantly differ from those of other citizens. Thus, the Bosnian Constitution has exhausted all the possibilities of ensuring any progress. It needs serious reforms to stand in conformity with the European standards.